

Ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ավանդները երաշխավորված են բանկում ներդրման պահից, ինչի համար ավանդատուի կողմից որևէ գործողություն կամ ծախս չի պահանջվում:

Հատուցման դեպքում ավանդատուն իր երաշխավորված ավանդը ստանալու համար պետք է ներկայացնի.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԱՅՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի նպատակն է՝

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումը՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

Հիմնադրամը երաշխավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդները:

Դիմում-պահանջ

Անձը հաստատող փաստաթուղթ


Այն անձը հաստատող փաստաթղթերը, որոնք ավանդատուն ներկայացրել է բանկ իր ավանդը ձևակերպելու համար

Սոցիալական ապահովության քարտ, իսկ դրա բացակայության դեպքում տեղեկանք այն չունենալու մասին

Անհրաժեշտության դեպքում՝ անվճարունակ բանկի նկատմամբ պահանջը հավաստող փաստաթղթեր (ավանդային պայմանագիր, բանկային գրքույկ, այլ փաստաթղթեր):

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԱՅՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Խորենացի 15,
«Էլիտ Պլազա» գործարարական համալիր
2-Ա5 գրասենյակ
+374 10 58 35 14
www.adgf.am,
info@adgf.am



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԱՅՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների երաշխավորող Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամն է

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴ Ե ՀԱՄԱՐԿՈՒՄ

Բանկին տրամադրված գումարը, որը ենթակա է վերադարձման կամ վճարման ավանդատուին

Բանկային հաշիվների վրա գտնվող միջոցները

Բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված միջոցները

Վերը նշված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսագումարները

Ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրույթյամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՍ

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծված է « Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ՉԱՓԵՐՆ ԵՆ.

Միայն ՀՀ դրամով ավանդի դեպքում	Միայն արտարժույթով ավանդի դեպքում
16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ
ՀՀ ԴՐԱՄՈՎ և ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԵՊՁՈՒՄ	
Եթե դրամային ավանդը ավելի է 7 միլիոն ՀՀ դրամից	Միայն դրամային ավանդը՝ մինչև 16 միլիոն ՀՀ դրամ
Եթե դրամային ավանդը պակաս է 7 միլիոն ՀՀ դրամից	Դրամային ավանդն ամբողջությամբ, արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և դրամային ավանդի տարբերության չափով



Հիմնադրամի միջոցների ձևավորման հիմնական աղբյուրները բանկերի կողմից վճարվող երաշխիքային վճարներն են և այդ միջոցների կառավարումից ստացված եկամուտները: